



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ**

<< >> _____ 2018թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ երիտասարդներ

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ:

Այս ձեր օրն է, ձեր տոնն է: Այն դուխով երիտասարդների, ում համախմբման շնորհիվ հիմա մենք ապրում ենք նոր Հայաստանում և հետայսու նույն դուխով շարունակելու ենք կերտել ավելի լավ Հայաստան: Այսօր խիստ կարևոր է երիտասարդության ներգրավվածությունը՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթական, մշակութային և էլի շատ ու շատ ոլորտներում:

Հայ ժողովուրդը մշտապես բարձր է գնահատել հայրենասեր, նախաձեռնող անհատներին՝ հատկապես երիտասարդին՝ տալով նրանց լայն հնարավորություն ճիշտ, լիարժեք քաղաքացի կայանալու համար: Այսօր հատկապես, նորօրյա դուխով հայ երիտասարդությունն իր ներուժն ու գիտելիքները պետք է օգտագործի ի շահ մեր Նոր Հայաստանի զարգացման և հզորացման:

Սահմանում կանգնած մեր քաջորդիները՝ ապացուցեցին, որ իրենք հաղթող հերոսների զավակներն են ու հետնորդները:

Համոզված եմ, որ համատեղ ջանքերով կկարողանանք խելամիտ և կարճ ժամանակում լուծել մեր պետության առջև ծառայած բոլոր դժվարությունները, դիմակայել բոլոր մարտահրավերներին և համախմբված կերտել նոր Հայաստան, որտեղ կիշխի սերն ու հանդուրժողականությունը:

Սիրելի՛ երիտասարդներ, կրկին շնորհավորելով այս գեղեցիկ օրվա կապակցությամբ, ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն, երջանկություն և հաջողություններ ձեր բոլոր նախաձեռնություններում:

Կ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ